Քրիստոսի Ս. Գերեզմանի կափարիչ քարին նկատմամբ ուրիշ աւանդութիւն մը կը յիշէ մեր Յովհաննէս վրդ. Երզնկացին իր Մատթէոսի մեկնութեան մէջ. «կափարիչս այս ասեն է վէմն այն զոր եդ Յակոբ ընդ ննարս իւր, և օծեաց և կանգնեաց արձան՝ յորում ետես զտեսիլն, եւ անուանեաց զտեղին (Ծնն. ԻԸ. 11–13) ասելով. Տէր ի տեղւոջս այսմիկ։ Արդ զայն վէմն եդ ի դուռն գերեզմանին, որպէսզի պահեսցէ վէմն զվէմն՝ զոր անարգեցին շինողքն, և հատաւ առանց ձեռին ի լեռնէն՝ եւ ելից զտիեզերս. լինելով գլուխ անկեան՝ ըստ մարգարէութեան, այլ եւ վէմ գլորման և քար գայթակղութեան անհաւատիցն, եւ դուռն երկնից հաւատացելոց իւրոց» (Ծnr. ԻԷ. էջ 606)։ Մեր Զաքարիա կաթողիկոսն ալ կը գրէ իր Տիրոջ թաղման ճառին մէջ. «զՎէմն զոր Աբրահամ ի վերայ սորա կացեալ յարձակեցաւ և իջոյց զխոյն, զայն թաւալեցոյց և եդ կափարիչ գերեզմանին» (Ձեռ. Թ. 918)։

Նիկոփոր պատմիչը (ԺԴ. դար) կ'ըսէ թէ Ս. Գերեզմանին կափարիչ վէմը կապուած էր մեծ շղթայով մը եւ պատկառելի Պէտի (Bède, Է. դար) ժամանակ անոր հետքերը նոյն քարին վրայ տակաւին կը տեսնուէին (Գիրք Բ.)։

Հոս էր որ Պետրոս երիցս ուրացաւ Տէրը (Մտթ. ԻՁ. էջ 69), այդ պատճառաւ Յիսուս ըսած էր Պետրոսին թէ «մինչչև հաւու խօսեալ իցէ երիցս ուրասցիս զիս»։ Այս դէպքին ի յիշատակ նոյն եկեղեցիին դիմացը դրուած էր կճեայ սիւն մը՝ վրան աքաղաղ, ինչպէս կը գրէ Մարինոս (Մar. Ա. հատ. էջ 278)։ Մինչև այժմ կը գտնուի աքաղաղին քարէ պատկերը նոյն եկեղեցիին Զարչարանաց սեղանին դիմացի պատին վրայ։